

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՕՐՎԱ ՊԱՀԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՌԵՐԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ*

ՀՏԴ 811.161.1

Ալթունյան Էդիտա

Արցախի պետական համալսարանի Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ

Արցախի Հանրապետություն,

Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն

edita_altunyan@mail.ru

Հոդվածի նպատակն է քննության առնել առավուտ, կեսօր, իրիկնապահ հասկացությունները, դրանց բարբառային համապատասխանությունները և հոմանիշային խմբերը Ղարաբաղի բարբառում՝ այդ միավորների իմաստային ողջ շրջանակի համակարգմամբ, դրանց լեզվամշակութային արժեքի բացահայտմամբ, իմաստաբանական վերլուծություններով, որոնցով արտահայտվում են բարբառակիր ժողովրդի մտավոր և կենսամշակութային առանձնահատկությունները:

Հետազոտության շրջանակում մեր առջև խնդիր ենք դրել հիշյալ միավորների ստուգաբանական վերլուծությունների և իմաստաբանական տեղաշարժերի ուսումնասիրությամբ վերհանելու դրանց գործառական առանձնահատկությունները, ինչն էլ իր հերթին հնարավորություն է տալիս պարզելու այդ միավորների կենսագրության զարգացման ընթացքը՝ նաև այդպես փաստարկելի դարձնելով Արցախի տարածքում հայերենի վաղնջական գործածության և բարբառի կրած լեզվական ազդեցությունների իրողությունը:

Ուսումնասիրությունը կատարել ենք վերլուծական և համեմատական մեթոդների կիրառմամբ՝ պատմական և համաժամանակյա հայեցակետերով. տրվում են միավորների ծագումնաբանական տեղեկանքները, ապա համապատասխան պարզաբանող օրինակներով բացահայտվում են տվյալ միավորի գործառական հաճախականությունն ու կենսունակությունը:

Արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ քննվող միավորների ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել արցախցու յուրօրինակ ինքնությունը, ազգային դիմագիծը, աշխարհի ընկալումների ինքնահատուկ մոտեցումը: Ղարաբաղի բարբառի բառապաշարային հիմքի վրա կատարված քննությունը վեր է հանում բարբառի բառապաշարի ուրույն տեղը հայերենի բառապաշարի համապատկերում:

Բանալի բառեր՝ Ղարաբաղի բարբառ, օրվա պահեր, առավուտ, կեսօր, իրիկնապահ, հոմանիշային բազմազանություն, ժամանակային հաջորդականություն:

Օրվա երեք պահերը՝ **առավուտ, կեսօր, իրիկնապահ**, հայերենյան հուշարձաններում բնիկ միավորներով են բառային իրացում ստացել: Ղարաբաղի բարբառում

* Հոդվածը ներկայացվել է 15.07.2022:

Տպագրության է երաշխավորել ԱրդՀ ռեկտոր, ք.գ.թ.,դոցենտ Ա. Յու. Սարգսյանը: 19.07.2022

Հոդվածը ընդունվել է տպագրության 29.07.2022:

դրանք նույնպես վկայված են ու դրսևորվում են հոմանշային խմբերով:

Հր. Աճառյանն իր «Հայերեն արմատական բառարանում» **առավոտ** բառը թեև չի ստուգաբանում, բայց փաստարկներ է բերում **առ** նախդրից և **աւօտ** արմատից կազմված լինելու օգտին, ինչպես որ ունենք **ց+այգ**: Ըստ նրա՝ **աւօտ** արմատը *ժամանակ* է նշանակում, և այդ բառից են կազմված նաև **շաղաւօտ** (գիշերվա ժամը 4-ը՝ ըստ արևելյան ժամահաշվի) և **կամաւօտ** (գիշերվա ժամը 5-ը) ժամանունները¹: Անդրադառնալով հայերենի ու խեթերենի հավանական առնչությանը՝ Հր. Աճառյանը այդ լեզուներում հնչյունական և իմաստային նմանություն ունեցող տասը բառերի թվում նշում է **arriwar-առաւօտ** «**առավոտ**» տարբերակը, սակայն չի բացատրում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեռևս ճշտված չեն խեթերենի և հնդեվրոպական այլ լեզուների, այդ թվում հայերենի հնչյունական համապատասխանությունները²: Ավելի ուշ Գ. Ղափանցյանը և Գ. Ջահուկյանը հայ-խեթական հնարավոր առնչությունների իրենց քննություններում *առաւօտը* (*arriwar*) չեն ներառում³:

Գ. Ջահուկյանի կարծիքով՝ **առավոտ** (առաւօտ) բառը սերում է հնդեվրոպական ***aus-** «*լուսավորել, լույս*» արմատից՝ **առ-** նախածանցով և **-աւօտ** վերջածանցով, իսկ արմատը **աւ-**ն է⁴:

Բառի նույնպիսի կազմության օգտին է խոսում նաև Էդ. Աղայանը. «*Մենք արմատն ենք համարում աւ, իսկ առ- և -աւօտ (օտ)՝ ածանցներ*»⁵: Ի տարբերություն Գ. Ջահուկյանի՝ Էդ. Աղայանը **աւ-**ի նախածն է համարում հնդեվրոպական «*արեգակ*» նշանակող ***saw-** արմատական տարբերակը⁶: Գ. Ջահուկյանը, սակայն, Էդ. Աղայանի այս վարկածը համարում է անհավանական:

Առավոտ բառի մեկ այլ ստուգաբանություն է առաջարկում Վ. Պետրոսյանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ **առավոտ** բառի վերոհիշյալ *լուսավորել, լույս* և *արև, արեգակ* սկզբիմաստների հետ իմաստաբանական ընդհանուր դաշտում է նաև **օր** (գրբ. **աւր**) բառը և այն, որ **առավոտ** նշանակում է օրվա որոշակի ժամանակը՝ սկիզբը, այլ կերպ՝ *լուսաբացը*, նա հավանական է համարում **առավոտ**-ի ծագումնաբանական կապը **աւր** (**awr**) բառի հետ, այն է՝ **առ-աւր-աւօտ** բաղադրիչների կազմով: Այսպիսով՝ Վ. Պետրոսյանին ավելի հավանական է թվում **աւ** բաղադրիչի և **աւր** բառի անմիջական ծագումնաբանական կապը, քան թե նրանց անմիջական կապը ***saw-** «*արեգակ*» կամ ***aus-** «*լուսավորել, լույս*» նախածների հետ⁷:

Ղարաբաղի բարբառում **առավոտ** հասկացության բառանվանումները ներկայանում են բազմաթիվ հոմանիշային տարբերակներով: Տարբերակային բազմազանությունը բացատրվում է այն հանգամանքով, որ «*այդ օրապահն ընդգրկում է բավական երկար ժամանակահատված՝ գիշերավարտից մինչև կեսօր*»⁸: Հետևաբար և անորոշ այդ ժամանակահատվածն առավել կոնկրետացնելու, հնարավորինս ճանաչելի դարձ-

¹ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1926, էջ 256:

² Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, մաս 1, Երևան, 1940, էջ 149:

³ Ղափանցյան Գ., Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Երևան, 1961, էջ 147-219: Ջահուկյան Գ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, էջ 123-152:

⁴ Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 73:

⁵ Աղայան Է., Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974, էջ 24:

⁶ Աղայան Է., նշված աշխատությունը, էջ 24-27:

⁷ Պետրոսյան Վ., Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Երևան, 2015, էջ 314-319:

⁸ Բառնասյան Ջ., ժամանականիշ բառերը հայերենի բարբառներում, Երևան, 2009, էջ 16:

նելու միտումով օրվա այդ պահին անվանելիս մարդիկ ընտրել են այդ օրապահին բնորոշ որևէ հատկանիշ և դրել անվանման հիմքում՝ նայած թե ինչն է առավել կարևոր համարվել այդ ժամանակահատվածի համար:

Քննենք **առավոտ** բառի համապատասխանությունները Ղարաբաղի բարբառում:

Բարբառի տարբեր խոսվածքներում այն մի քանի հնչատարբերակներով է դրսևորվում՝ **ուռթանա / ուռութանա / ըռութանա / ըռավետ/ ըռավօտ**: Ընդ որում այն ունի և՛ «արևը ծագելու ժամանակը՝ առավոտ» իմաստը, և՛ «առավոտ ժամանակ՝ առավոտյան» նրբիմաստը: Օրինակ՝ **Ըռութանան վեր կամ ա, Աբրամը Թելուսէն ծէն ա տամ: [ՂԲԲ, 172]/Էս մարթը ամմէն օր ուռթանան տածօ ա կամ, ձօրածօճօնը կամ: [ԱԲ, 124]**

Այս բառամիավորն առկա է **ըռութանա անէլ** դարձվածային կապակցության մեջ, որ նշանակում է *առավոտյան տնային գործերը կատարել*, նաև՝ *նախաճաշել*: Օրինակ՝ *Էտ կընէճը յըր ա կէնում, վեր ըռութանա անէ, ծըկըլթօնը ըղնում ա շէնը: [ՂԲԲ, 172]*

Առավոտվանից մակբայական նշանակությունն ունի **ըռութնա(ն)ց** բառածևը, որը նաև **ուռութունա(ն)ց** և **ուռթնա(ն)ց** հնչածներով է դրսևորվում՝ **Ըռութնանց վեր սըքսում ըն հմնծ անէլը, չըքէրանը քըսմը դինջանում չըն: [ՂԲԲ, 172]**

Գիշեր բառի գործիականի քարացած հոլովածևը՝ **գիշերով, վաղ առավոտ, գրեթե գիշեր, դեռ լույսը չբացված** նրբիմաստներն է ներառում, այլ խոսքով՝ գործողությունն ավելի շուտ գիշերը, քան թե առավոտյան կատարվելու հանգամանքն է մատնանշվում¹: **Գիշերով** գործիականի ձևը բարբառում օրինաչափ հնչյունափոխության է ենթարկվել (**քըշերավ / քիշերավ**)՝ պահպանելով վերոնշյալ իմաստները՝ **Քըշերավ վեր իրլ՞վին շօխը տաս ա ըշկէրէն, տըր՞ղան լօք ա տաս, տըսնաս հի՞նչ. խընծօրածն մին ձէղնը քաղած տարած: [ԱԲ, 80]**

Նույն արմատից կազմված հոմանիշային տարբերակ է **քըշըհանա / քըշըհանա / քըշանա** ձևը: Այն բարդ բառ է՝ կազմված **գիշեր** և **հան** բաղադրիչներով: Բառի ներքին ձևը հուշում է հետևյալ իմաստները՝ *գիշերից հանված, ազատված*, որով էլ ընդգծվում է վաղ առավոտ լինելու հանգամանքը: Այսպես՝ *Ա՛ստուծ, յ՞նի հինչ կընի՞, քըշըհանա յէր կէնանք տէսնանք՝ յէրճինք՝ան իրէք հափուռ ցօրէն վեր տ՞քած, յօր ունենք օտէնք: [ԱԲ, 140]/Քըշանա կամ ա ասում. «Մէլիք-Շահնազարը ապրած կէնա, յէկալ ում, վըր՞սկէս ինծ տօ՞»: [ԱԲ, 294]*

Շատ վաղ առավոտ լինելու հանգամանքը շեշտվում է **քըշըհանա-քըշերավ** կամ **քըշերավ-քըշըհանա** բարդությամբ: Այստեղ արմատի կրկնությունը սաստկական երանգ է տալիս արտահայտությանը՝ **Քըշըհանա-քըշերավ ժողովուրթէն հարայ-հըրոցէն յըրա գածրթնունաս ա, թօրը յօր ունէս նի հըսնէս ախպածրը: [ԱԲ, 86]**

Իմաստային կրկնավորությամբ է կազմվել նաև **ըռութանա-քըշերավ** բարդությունը, որը լայն գործածություն ունի բարբառի տարբեր խոսվածքներում՝ *Դէ, քինի բօն իլ, ուռթանա-քըշերավ յէր կըկէնաս՝ տըր՞սնանք հուվ ա դածօ: [ԱԲ, 79]*

Վերոհիշյալ **հան** արմատը Զ. Բառնասյանի կարծիքով կարող է բաղադրություն կազմել նաև **առավոտ**-ի հետ, ինչպես՝ **ըռըվըտհանա**²: Հավանական է, որ **ըռըվըտհանա** բառն առաջացել է կամ **քըշըհանա** ձևի համաբանությամբ, քանի որ

¹ Բառնասյան Զ., նշված աշխատությունը, էջ 18:

² Նույն տեղում, էջ 19:

նրանում չի գիտակցվում **հան` հանել** իմաստը, ինչպես **քըզըրհանա** բառի մեջ, կամ էլ առաջացել է **ըռութանա** ձևից՝ **թ** հնչյունի տարրալուծման արդյունքում (թ=տ+հ):

Ծագումնաբանական մի առանձին խմբում էլ կարելի է առանձնացնել բնիկ հայերեն **լույս** արմատից սերող բառանվանումները: Միանգամայն բնական է, որ **առավոտ** հասկացությունն առնչվում է արևի լույսի տարածվելու գաղափարի հետ¹:

Լծոս (լույս) արմատը առանձնաբար էլ ունի *լուսանալու ժամանակ, լուսաբաց, արևածագ* իմաստները, ինչպես՝ *Քունավ ըն ընցընում, մին վախտ յեր ըն կենում, տխնում` լծոս: [ՂԲԲ, 254]*

Առավել շատ են, սակայն, **լույս** արմատով բաղադրված բարդությունները:

Լույս և **մոտ** (**մոտիկ**) բաղադրիչներով կազմված **լծոսամոտ** բառանվանումը, որ գործառում է *վաղ առավոտ* նշանակությամբ, հաճախական կիրառություն ունի բարբառի տարբեր խոսվածքներում: Այսպես՝ *Ըտի հը՛ռ քըշի՛վ մինչը՛վ լծոսամոտ տտմ ա կընաս: [ԱԲ, 82]*

Բառը երբեմն հանդես է գալիս նաև թեքված՝ հոլովված ձևով՝ *Լծոսըմոտն` հալա ծ՞քը պըտըռէլու, տըսնաս ա հի՞նչ` մին իրը՛քլըլխանէ դէվ: [ԱԲ, 82]*

Լուսաբաց, արշալույս նրբիմաստներն ունի բարբառային **լծոսապէց/լծոսպէց** բառը, որը նույնպես կարող է հանդես գալ և՛ ուղիղ, և՛ թեքված ձևով, ինչպես՝ *Մարթը չըրու լծոսապէց էծին հէտան շօռ ա կաս, լծոսապէցին քիզ՞րած տօն կաս: [ՂԲԲ, 254]*

Լույս և **դեմ** բաղադրիչներով է բաղադրվել **լծոսատն** բառամիավորը, որն ունի *լուսանալուն մոտ ժամանակը, լուսադեմ* նրբիմաստները: Վերջինիս հոմանիշ է **լծոսվլլծոս** բառը՝ *Հինչ դէ՞ր դալաթ կանար սաղ քըշէրը քէի անար, լծոստէմին քինար պաղարաթ անար: [ԶՏ, Բ, 154]*

Իմաստային նույն խմբում է **լծոսըթաթախ** բառը՝ *առավոտ կանուխ, լուսադեմին մակբայական նշանակություններով*: Օրինակ՝ *Ըտի լծոսըթաթախ ըշտըդ՛ղ ը՞ս ք՛ծնծծն: [ՂԲԲ, 255]*

Նույն իմաստն ունեն նաև **լծոսըշաղախ**, **լծոսըպըռօկ** և **լծոսվլլննը** բառերը:

Առավոտ հասկացության դիմաց բարբառում գործառող հետաքրքիր մի տարբերակ է **լուսըծըլլօցէն** բառանվանումը՝ կազմված **լույս** և **ծլլալ** բաղադրիչներից, որոնց իմաստներից իսկ պարզ է դառնում բառի իմաստային նրբերանգը՝ *Կյալին ու Ակին լուսըծլլօցէն քընում ըն հոնծ: [ՆԱԲ, 106]*

Քանի որ *վաղ առավոտը, լուսաբացը* հատկանշվում է լույսի և մութի դեռևս լիովին չտարբերակված սահմանագծով, լուստի և հնարավոր է դառնում օրվա այդ պահը անվանել նաև **լույս** և **մութ** բաղադրիչների զուգորդությամբ կազմված **լծոսըմըթէն** բառով:

Լուսանալուն մոտ ժամանակ, լուսաբաց իմաստն է արտահայտում **դըբըլլծոս / դիբըլլծոս** գոյականը: Այն ձևավորվել է ուղղություն ցույց տվեղ **դեպի** կապով, որը տվյալ դեպքում մատնաշում է ժամանակի հոսք *դեպի լույս Ըտի էտ կընէ՛գը չըքօրանը դըբըլլծոս էն ա ինծծ սնք ըսէլիս: [ՂԲԲ, 120]*

Հոլովված ձևը՝ **դըբըլլծոսին / դիբըլլծոսին**, ունի ժամանակի մակբայի արժեք՝ *լուսանալու ժամանակ, լուսաբացին նշանակություններով` Տէսնըմ ա՛ դըբըլլծոսին յերգինքան մին ծիյավէր յէկավ: [ՀԺՀ, V, 337]*

¹ Նույն տեղում, էջ 20:

Բարբառում **լձծս** բառով բաղադրված բարդությունները մեծաթիվ են, սակայն քննվող իմաստային դաշտում հետևյալներն են **լձծսա մօտէ**-վաղ առավոտյան, լուսադեմին://**լձծսը ծօքիլ**-լուսանալ, արշալույսը բացվել://**լձծսը պէնվալ**-լուսանալ, լույսը բացվել:

Ծաքին եզրը **ծագ** արմատից է կազմված, որը սերում է հնդեվրոպական ***gʷogh-** արմատից՝ նախապես նշանակելով *ծայր, ցից, սյուն*¹: Արդի գրական հայերենում բառարմատն անկախաբար չի գործածվում, հանդես է գալիս բաղադրյալ կազմությամբ՝ *ծագել, արևածագ, լուսածագ...* Բարբառում թե՛ **ծօք / ծաք / ծէք** արմատական ձևը և թե՛ բառի քերականական ձևը՝ **ծաքին / ծօքին / ծէքին** (տրական հոլովածն) ինքնակա և անկախ կիրառություն ունեն: Առաջինը գոյական է՝ *առավոտ, լուսաբաց* նշանակություններով, երկրորդը՝ ժամանակի մակբայ՝ *առավոտյան, լուսաբացին* իմաստներով: Ինչպես **Անը՞ռը ծօքը ձէլլի յա ինձօմ, ծըմբ՞ռնը՝ յր՞տէ**: [ՂԲԲ, 298]/**Ըտը՞դ վէր ա կամ, հանցու քըշէրը քօն ինի, ծաքին էլիա յէր կէնա, հըղէ ընգէ**: [ԱԲ, 96]

Հաճախադեպ կիրառություն ունի նաև նույն հիմքից բաղադրված բայական ձևը՝ **ծօքիլ / ծաքիլ / ծէքիլ**, որ նշանակում է *արևը ծագել, լույսը բացվել, լուսանալ*, ինչպես՝ *Վէր ծաքում ա, մըտնում ըն ծըմակը*: [ՂԲԲ, 198]

Ծաքին մակբայական ձևին իմաստով համարժեք են **ծըքձծլին** և **ծըքպըտառէն/ծիքպըտառէն** բառամիավորները: Վերջինս բարբառում հանդես է գալիս նաև նկարագրական եղանակով՝ **ծաքը պըտըռէլին՝ Կկարի՞ս քշերավ, ուռթանա ծաքը պտըռէլին կյաս եղծեն, ընդեղ կործղ կկտրիմ**: [ՆԱԲ, 60]

Իմաստային կրկնավորությամբ է կազմվել **ծօքին-ծըքպըտառէն** բարդությունը, որին համարժեք է **ծօքը ծօքին** դարձվածային արտահայտությունը՝ **Ճէղաց թինօղնէն ծօքը ծօքին ըն էշէրը պէռնում, հըղէ ինձօմ**: [ՂԲԲ, 299]

Արմատի կրկնությամբ է կազմվել **ծըքծըքօտէլ / ծիքծիքօտէլ** բառամիավորը, որ նշանակում է՝ *արևը նոր-նոր ծագել՝ շողարծակել, լույսը սկսել բացվել՝ Մինչք՞վ ծըքծըքօտէլը տը՞սնամ էս ա յէկին, ծիյանքը կըպէցին, նի մըտին պալատը*: [ՀԺՀ, V, 33]

Արևի նոր-նոր ծագելու պահը բարբառում արտահայտվում է նաև **ծըքծըքօտուց / ծիքծիքօտուց** բառով, ինչպես՝ **Ծըքծըքօտուցը վէր ըսքըսում ա, Հըրանդիկը էն ա ինըմ ուժէ հմնձ ընէլիս**: [ՂԲԲ, 316]

Կրկնավոր բարդության արժեք ունի **մըթընմըթէն** բաղադրությունը՝ *դեռ լույսը չբացված* նրբիմաստով՝ *Էտ մ՞թթիքըտ քիշէրավ, մըթընմըթէն հըղէ յըն ինիս, քըսօրէն հըսնէս ձօր՞ց կումբէռնատօրէն ասած շէնը*: [ՀԲ, 338]/**Մարթը մթընմթեն եր ա կենում, դերին շորերը կյենում, տուս կյամ**: [ՆԱԲ, 116]

Լույսի և մութի միախառնման պահ մատնանշելու հանգամանքը **մըթընմըթէն** բաղադրությանը հնարավորություն է տալիս ներկայացնելու ոչ միայն լուսաբացը, վաղ առավոտը, այլ նաև օրավարտը, իրկնապահը: Այդ մասին վկայում են օրինակները, որոնցում **մըթընմըթէն** բառը գործածվում է ինչպես **քիշէրավ (առավոտյան)**, այնպես էլ **րուգիւն (երեկոյան)** բառանվանումների զուգորդությամբ՝ **Մե հետ Աշտուր րուգիւնը մթընմթեն կյամ ա Տիկրանեն տոնը**: [ՆԱԲ, 136]

Ղարաբաղի բարբառով գրված հեքիաթներում շատ է հանդիպում **վըրցըկկանչին** ձևը: Այս բառը կոպիտ մոտավորությամբ մատնանշում է *վաղ լուսաբացը* կապվելով

¹ Ջահուկյան Գ., նշվ. Աշխ., էջ 357:

հայերենում և այլ լեզուներում ընտանի կենդանիների և թռչունների վարքի միջոցով օրապահը որոշելու սովորության հետ¹: Բերենք օրինակներ՝ *Թունի՛, տու՛ վրցըկանչին եր կկենաս, հանցու կարիս սրինավ տեղ հսնիս: [ՆԱԲ, 105]* // *Հունվարեն մին փսնգյու քշեր վրցըկկանչա ետ, քամեն պտուտուն ար տամ, օգում ար թա տները կլլե ածե կրկժանա ծորը: [ՆԱԲ, 129]*

Քանի որ օրվա այս պահի համար կարևոր հատկանիշ է համարվում արևի ծագելը, ուստի **առավոտ** բառիմաստը երբեմն արտահայտվում է նաև **Յրը՛վը ծ՛քիլ կամ ծէք՛ տալ** և **Յրը՛վը տածս կ՛լ** կապակցություններով, որոնք ունեն *օրը բացվել, լուսանալ* իմաստները:

Զ. Բառնայանը գրում է. *«Առավոտ հասկացության իմաստով հայերենի բարբառներում գործառուղ բառանվանումների քննությունը ցույց է տալիս, որ գիշերավարտից մինչև կեսօր ձգվող այդ օրապահի բառանվանումներին բնորոշ է հոմանիշային բազմազանությունը»*²: Այդ բազմազանությունը վառ կերպով արտահայտված է նաև Ղարաբաղի բարբառում:

Լ. Հովհաննիսյանի վկայությամբ՝ **կեսօր** բառը գրաբարի բառարանները չեն ավանդում, եղած եզակի օրինակներում էլ «կեսօր, օրվա կեսը» իմաստը հստակ չէ: Այդ իմաստն արտահայտվում է **հասարակ՝ «կես»** և **աւուր** բառերի հարադրությամբ կամ **միջօրէ** բառով³: **Կեսօրը** գործածության մեջ է մտել համեմատաբար ավելի ուշ: Այն մեզ հայտնի **կես** և **օր** արմատների բաղադրությունն է: Օրինակ՝ *Քինում ըն, քինում, կէսօրէն մին ըխպիրած կօխկէ նըստումն, վէր հաց օտին, համ էլ պատառ դինջանան: [ԱԲ, 99]*

Ղարաբաղի բարբառում **կեսօր** բառն ավելի շատ **քըսմը / քըսմը** հնչաձևերն ունի, ինչպես՝ *Քըսմըէն Ջածմբածթածտ դուշը, ճուտէրէն հէտէ վը՛րս ըրած, կաս ա տիյը՛ր յիշիս, տըսնաս ծառէն տակը ըռնըփալալ: [ԱԲ, 87]*

Քըսմըը ծըռ(վ)էլ դարձվածն ունի *երեկոյանալ, օրը դեպի երեկո թեքվել* իմաստները:

Կեսօր հասկացության իմաստով հայերենի տարբեր բարբառներում գործառուղ ձևերի մեջ առանձին մի խումբ են կազմում **ճաշ** բառանվանման օրինաչափորեն հնչյունափոխված տարբերակները⁴: Ըստ Հր. Աճառյանի՝ գրաբարյան աղբյուրներում հաճախադեպ կիրառություն ունեցող **ճաշ** բառը իրանական փոխառությունների շերտին է պատկանում: Այն ոչ միայն *կեսօրվա կերակուր, խնջույք, հացկերույթ* իմաստներն է ունեցել, այլև արդեն իսկ փոխատու լեզվում ունեցել է *ճաշելու ժամ* բառիմաստը⁵: Պարբերաբար կրկնվող երևույթի անունով էլ շատ հաճախ անվանվել է նաև դրա կատարման ժամանակը: Ահա այս ձևով էլ **ճաշ** (կերակուր, խնջույք) բառը սկսել է գործառել նաև **ճաշելու ժամ կեսօր** իմաստով, այսինքն՝ ձեռք է բերել ժամանականիշ բառի արժեք: Այս երևույթը նկատելի է նաև Ղարաբաղի բարբառում, ինչպես՝ *Ճ՜շին հմնծ ընօղնէն հըվաքվում ըն ըխպիրին դըրաղէն: [ՂԲԲ, 463]*

¹ Բառնայան Զ., նշված աշխատությունը, էջ 28:

² Նույն տեղում, էջ 28:

³ Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն, մաս I, Երևան, 2008, էջ 82:

⁴ Բառնայան Զ., նշված աշխատությունը, էջ 33:

⁵ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1926, էջ 185:

ԾՅ-ով բաղադրվել են հետևյալ կապակցությունները՝ **ԾՅ անել**-Կերակուր, հատկապես՝ բրնձով փլավ եփել։//**ԾՅը իփիլ (մինին)**- Մեկին ծեծել՝ խիստ պատժել։

Կեսոր դառնալ՝ լինել իմաստն են արտահայտում նաև **օրը ԾՅ տղիննալ և օրը քնսոր տղիննալ** դարձվածները։

Ճաշ հասկացության արժեքով բարբառում հաճախ է կիրառվում **աբէդ** բառը։ Այն ունի և՛ *ճաշ, կերակուր* իմաստը, ինչպես՝ **աբէդ տանէլ**, այսինքն՝ *ճաշ տանել*, կամ **աբէդ անէլ՝ ճաշել**, և՛ ճաշելու ժամանակ, կեսոր իմաստը, ինչպես՝ **աբէդին յըկալ ա՝** կեսօրին եկել է։

Աբէդ փոխառյալ եզրին հոմանիշ է **քըսածրահաց** բարբառային ձևը՝ *կեսօրին ուտելը՝ ճաշ և ճաշելու համար նախատեսված ուտելիք* իմաստներով՝ **Քըսածրահացը** վեր ըսքըսում ըն, թօռը նի յա օնում։ [ՂԲԲ, 812]//*Ախպէրքը շատ ըն ըսպասում, ամմա քուրը քըսածրահացը պիրում չի։* [ՂԲԲ, 812]

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ **աբէդ** փոխառյալ տարբերակն այսօր ավելի տարածված է ու կիրառության ավելի լայն հաճախականություն ունի, քան բարբառային **քըսածրահաց**-ը, ինչը ռուսերենի ազդեցության արդյունք է։

Քըսածրայլէտ /քըսածրայլէտ բառամիավորն ունի *կեսօրից հետո*, երկրորդաբար նաև *ուշացումով* նրբիմաստը՝ **Քըսածրայլէտ** Յրէվը էլիա տածա ա կամ։ [ՂԲԲ, 812]//**Քըսածրայլէտ** Հօրին ըսքըսալ ա մը՝ q նրիդէտ պարիկըմօթուն անէլը։ [ՂԲԲ, 812]

Այս բառամիավորը բաղադրել է **քըսածրայլէտ հՅՅօ կալ** դարձվածային կապակցությունը, որ նշանակում է *մեկի՝ մի բանի հարզը՝ արժեքը ուշ հասկանալ*։

Ինչպես գիտենք, **կեսօրը** համարվում է օրվա ամենատաք պահը, երբ արեգակը գտնվում է զենիթում և առավելագույն չափով է տաքացնում երկիրը։ Այս երևույթի հիման վրա **կեսօր** իմաստը բարբառում երբեմն արտահայտվում է նաև **արև** բաղադրիչով կազմված և ժողովրդի պատկերավոր մտածողության արդյունք հանդիսացող հետևյալ կապակցություններով՝ **ըրէվէն գահումը և ըրէվէն տղորքտղորքուտէլիս վախտը**, որոնք ունեն *կեսօրին, արևի կիզիչ պահին* նշանակությունները։

Օրվա այս լուսավոր հատվածը արտահայտվում է նաև **ցերեկ** ժամանականիշով։ Ըստ Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի»՝ **ցերեկ**-ը բնիկ հայերեն կառույց է՝ **երեկ (երեկո)** բառից՝ **ց** նախդրով և նշանակում է «*մինչև երեկո եղած ժամանակը*»¹։ Դարաբաղի բարբառում այն **ցիրըկ** հնչածնն ունի, ինչպես՝ **Ցիրըկը հանց կա՛ց, վեր քըշէրը դինջ քօն ինիս։** [ԱԲ, 530]

Իրիկնապահ հասկացությունն ընդգրկում է կեսօրից մինչև գիշեր ձգվող տևական մի ժամանակահատված, որի դիմաց գործառույթ բառածները ներկայանում են հոմանիշային բազմազանությամբ, նայած թե այդ պահի համար ի՞նչն է առավել բնորոշ համարվել։ Այս օրապահը նշելու համար ստեղծվել են բառաբաղադրություններ բառակազմական տարբեր կաղապարներով։ Շատ դեպքերում ի հայտ են գալիս պատկերավոր լեզվամտածողության հետաքրքիր դրսևորումներ²։

Իրիկնապահը կամ **երեկոն** բարբառում մեծ մասամբ **ձորածգձօ(ն)/ըրածգձօ(ն)** հնչատարբերակներով է ներկայանում։ Գ. Ջահուկյանի կարծիքով **երեկո** բառը ծագում է

¹ Աճառյան Հր., նշված աշխատությունը, հ. 4, էջ 453։

² Բառնապյան Զ., նշված աշխատությունը, էջ 34։

հնդեվրոպական ***reguos-** բառարմատից՝ *մութ, խավար* նշանակություններով¹: Նույն արմատից են սերված **երեկ, երեկո, ցերեկ** ժամանականիշ միավորները: **Երեկ**-ը բարբառում **յըրկէ** հնչատարբերակն ունի, իսկ **ցերեկը-ց+երեկ**, ինչպես վերը նշեցինք, **ցիրէկ** հնչաձևով է դրսևորվում: Բերենք օրինակներ **ձորածճճմ** բառամիավորի համար՝ *էտ տըղան ձորածճճմը ութաղէն լածսը հընգըցնում ա, խընծմըը տընածմ ըստօլէն, վար քօն ինի, չըրաղվանը ինածմ ա ըտէղէք*: [ԱԲ, 125]//Սահանք լիա վեննուք-ծեռուք եկալ ըն ընգալ խտետս, **ըրգմնկա** ճաշս կա ու կա: [ՆԱԲ, 24]

Երեկոյան, երեկո ժամանակ իմաստն է արտահայտում **ըրգօնէ / ձորգօնէ / ձորածճճումի** բառամիավորը: Ինչպես՝ *Մին օր ձորածճճումի պճնա պըրծած տանը նըստօտած ինք*: [ԴԲԲ, 177]

Նույն հիմքով է բաղադրվել **ըրածճճմանալ / ձորածճճմանալ** բառամիավորը, որ նշանակում է *մութն ընկնել, երեկո դառնալ*: Օրինակ՝ *Վէր ըրածճճմանում ա, չըղըլնէն ըսկըսում ըն հ՜չիլը*: [ԴԲԲ, 181]

Մինչև մութն ընկնելը, երեկոյից քիչ առաջ նրբիմաստներն է արտահայտում **ըրածճճմաչախ / ձորածճճմաչախ** բառամիավորը: Չախ բաղադրիչն այստեղ էլ ալվելի է ընդգծում **իրիկնապահ** հասկացության անորոշությունը: Նույն իմաստներն է արտահայտում նաև **ձորածճճմ (իրիկուն)** և **դեմ** անիսկական կապի բաղադրությամբ առաջացած **ըրածճճմատէմ/ձորածճճմատէմ** ձևը՝ *Ըրածճճմատէմ ա ինածմ, վէր չօբանը, վլճարը շըլակած, կամ ա տըրանց տօն*: [ԴԲԲ, 181]

Ժամանակի հոսքի և շարժման գաղափարն արտահայտելու համար օրվա պահերն անվանելիս կիրառվում են ուղղություն ցույց տվող կապեր ու կապական բառեր: Այսպես, օրինակ **դըբըրածճճում / դիբիրածճճում / դածբածրածճճում / դածճճում** բաղադրությունը կազմվել է **դեպի** կապով՝ **Դբրուցում ար, կյրեկի**: *Քաշկա ծորեն ընգյունան, խուտուր հղըցավը, շենին վեխճարը կյամ ար*: [ՆԱԲ, 99]

Փոխառյալ **չախ** բառը և **դեմ** անիսկական կապը **դածբածրածճճում** բառամիավորի հետ բաղադրում են **դըբըրածճճմաչախ / դիբիրածճճմաչախ / դածբածրածճճմաչախ** և **դըբըրածճճմատէմ / դիբիրածճճմատէմ / դածբածրածճճմատէմ** բառամիավորները, որոնք ունեն իմաստային նույն նրբերանգները՝ *Երեկոն ընկնելու ժամանակ, իրիկնադեմ, իրիկնամուտ՝ Դածբածրածճճմաչախ հըսնում ըն պըռավէն տօնը՝ վէրսը ծըրքըրնէրէն, մին լ՜վ խտրաված ըն քըցածմ, նըստում հաց օտում*: [ԱԲ, 145]//Մէհէտ **դուբածրածճճում չախը** *Բալասը քէցալ ա կըզըրտըղէն ծօրէն բօստանը, թա ճիրի*: [ՀԲ, 351]

Հարկ է նշել, որ **դըբըրածճճմաչախ** և **դըբըրածճճմատէմ** բառերը Ղարաբաղի բարբառում գործածվող երեք արմատից կազմված եզակի համադրություններից են **դեպի երեկոյի դեմ, դեպի երեկոյի չախ**:

Ղարաբաղի բարբառում լայն գործառույթ են դրսևորում **ժամ** բառի կրկնությամբ օրավարտի գաղափարը սաստկական երանգով արտահայտող **ժամաժամ(ք)** բառի օրինաչափորեն հնչյունափոխված տարբերակները: Բարբառի խոսվածքներում ժամանականիշ այս միավորը հանդիպում է հետևյալ հնչատարբերակներով՝ **ըժըմ՝ժէնք / ըժըմ՝ժճնք / իժիմ՝ժէնք / ժըմ՝ժէնք / ժիրժինք**: Վերջիններս ունեն *աղջամուղջ, մթնշաղ* նրբիմաստները: Հանդիպում են նաև **ըժըմ՝ժէնքի / ըժըմ՝ժճնքի / իժիմ՝ժէնքի / ժըմ՝ժէնքի / ժիրժինքի** բայական ձևերը՝ *աղջամուղջը՝ մթնշաղը վրա հասնել* իմաստով՝

¹ Ջահուկյան Գ., նշված աշխատությունը, էջ 223:

Միհենգ էտ օրատ տէսը, **իծմիծէնքանը** յէտը խըղդճ Բալաս դային էլ տածս չի կաս վէչ մի տըղդ: [ՀԲ, 351]//**ժըմըժնքում** ա՝ հ³ էդոն դընստէնքը պիրիլձծ:[ԱԲ, 404]

Օրավարտը նշելու հիմքի վրա **ըժըմ³ժէնք¹** բառը ծեռք է բերել փոխաբերական կիրառություն՝ *կյանքի ավարտ, մայրամուտ* նշանակություններով՝ *Հորը օրը վեր ժնըժնքում ա, ծեն ա տամ Ըհմդներեն, պարիկամներեն՝ ասում...* [ՆԱԲ, 53]

Քննվող բաղադրիչով բարբառում ունենք և դարձվածային միավոր՝ **ըժըմըժէնքան ճածր օզիլ՝ մահամերձ լինել** նշանակությամբ:

Վերոհիշյալ բառամիավորը բարբառում իր արտահայտությունն է գտել նաև մի քանի անեծքներում, ինչպես՝ **ժմաժենքը քեզ տանն:** // **ժնըժենքավը քընհա:** [ԱԲ, 544]

ժըմ³ժէնք¹-ին հոմանիշ է **քըշըրալձծս** բառանվանումը:

Ըժըմ³ժէնք¹ բառը երբեմն կիրառվում է ոչ թե օրավարտը, այլ լուսաբաց, վաղ առավոտ լինելը նշելու համար, որովհետև լույսի ու մութի միախառնումը միանգամայն բնորոշ երևույթ է օրվա այդ երկու պահերի համար: Այդ մասին վկայում է **ժըմաժէնք¹** բառի գործածությունը **ուռութանա** բառի զուգորդությամբ, ինչպես և առանց դրա՝ *Ասում ա, ուռթանա ժնըժենքեն, ըտղադ հռանում:* [ՆԱԲ, 52]//**ժնըժենքեն**, *հալա լուսն ու մթենը ճուկվելու, վննածեն ա կյամ:* [ՆԱԲ, 60]

Արեզակի մայր մտնելու ժամանակ՝ մայրամուտ իմաստը, բարբառում պատկերավոր կերպով արտահայտվում է նաև **արև և անցնել** բառերի հնչյունափոխված արմատների և **-ուկ** ածանցի զուգորդությամբ կազմված **ըրըվանցուկ/իրըվանցուկ/ըրըվագուկ/իրըվագուկ/ըրըվագունք/իրըվագունք** հնչատարբերակներն ունեցող բառամիավորով, ինչպես՝ **Ըրըվանցուկէն վախտը Պուղին, էշէրը պէռնած, մի յա մըննում շէնը:** [ՂԲԲ, 178]

Բառը երկրորդաբար ունի նաև *զոլվ, հովասուն* իմաստները, ինչպես՝ **ըրըվանցուկ տըղ ա:**

Բարբառի խոսվածքներում հաճախական կիրառություն ունի **մութ և ժուռ** արմատների զուգորդությամբ կազմված **մըթնաժուռ / մըթնաժուռ / մըթնաժուր / մըթնաժոր** բառանվանումը՝ *էքսի օրէն՝ մըթնըժուռէն, տըղան քինում ա, էլիա ըխճըկանան պաչում, կամ ձծրան տէղը կըչօռ անում:* [ՆԱԲ, 20]

Հանդիպում է նաև նույն հիմքից կազմված բայական ձևը՝ **մըթնըժուռէլ / մըթնըժուռէլ / մըթնըժուրէլ / մըթնըժորէլ**, ինչպես՝ **Մըթնըժուռած տօն կախս վախտը Մուխանը Իշխանէն հըյցընէս ա...** [ԱԲ, 325]

<<**ժուռ**>> արմատի նախածևը <<**շուռ**>>-ն է, որից, ըստ Արմատական բառարանի, սերում է <<**շուրջ**>> բառը¹:

Քանի որ **իրիկնապահ** հասկացությանը միանգամայն բնորոշ է «*մթնելու, մութն ընկնելու*» հատկանիշը, Ղարաբաղի բարբառում լայն գործառույթ են ստացել **մութ արմատով** բաղադրությունները, ինչպես՝ **մըթնէլ, մըթնըլձծս, մըթնըխառ(ն)ը, մըթնըշաղ, մըթնըվէլ** և այլն:

Մթնելու հատկանիշն արտահայտվում է նաև **Յըլ⁴վը մար մըննէլ** կապակցությամբ, որ նշանակում է *արևը արևմուտքում հորիզոնի տակ, ծածկվել:* Փոխաբերաբար ունի *դժբախտանալ, ծերանալ* նշանակությունները ևս:

¹ Աճառյան Հր., նշված աշխատությունը, հ. 3, էջ 539:

Ժամանակային հաջորդականությամբ **երեկոյի, իրիկնապահի** շարունակությունը **գիշերն է՝ քռէր / քիշէր** հնչաձևերով՝ *Ամա հէնց տօճն՝մ ա, վար ուրէրան մին օր սըքըսում ա ամնէն քիշէր նույն արագը տը՛սնալը:* [ԱԲ, 127]

Երեկո-գիշեր ժամանակային հաջորդականությունը ցայտուն կերպով երևում է հետևյալ օրինակում՝ *Սհանցա մինին րուգյու կօտիմ, էրկունեն էլ՝ քշերս:* [ՆԱԲ, 24]

Քռէր բառանվանումով բաղադրվել են հետևյալ կապակցությունները.

Քռէրէն կէսումը- Կեսգիշերին, գիշերվա ժամը 12-ին: // **Քռէրը ըղնէլ / կօխէլ**- Գիշերը՝ մութը վրա հասնել՝ ընկնել: // **Քռէրը լաճսըցընէլ**- Ամբողջ գիշեր մի տեղ մնալ մինչև լուսանալ: // **Քռէրը կիւղօթուն անէլ, ցիրո՛կը տէր ըղօրմի ասէլ**- Արտաքուստ բարեպաշտ ձևանալ: // **Քռէր ըղնէլ**- Չկարողանալ՝ չհասցնել ցերեկով՝ լույսով տեղ հասնել՝ գործը վերջացնել: // **Քռէրը մը՛ռնէլ, ցիրո՛կը յը՛ր կէնալ / սըղանալ**- Շատ ծեր կամ հիվանդ լինել: // **Քռէրը պըռապէլ**- Գիշերվա մեծ մասն անցնել, լուսանալուն մոտ լինել: // **Քռէրը ցիրո՛կ անէլ / շինիլ**- Գիշերն աշխատել: // **Քռէրը քօն չինիլ, ցիրո՛կը դարար**- Գիշեր-ցերեկ՝ օրնիբուն աշխատել, շատ աշխատասեր լինել: // **Քռէրվա կէսին**- Կեսգիշերին, գիշերվա ժամը 12-ին: // **Քռէր-ցիրո՛կ**- Շարունակ, միշտ:

Սուք և գիշեր բաղադրիչների զուգորդությամբ կազմված **մթնըքռէր** բաղադրությունն ունի *խիստ մութ և լռին գիշեր* նրբիմաստը՝ *Մին օր շատ-շատ ա լաց ընում, լոխ մննան ըղնում ա, ձօրան էլ ա մննան քցում, վեր օշը հլօրում ա, տեսնում ա՝ մթնըքռէր:* [ՆԱԲ, 73]

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Է., *Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ*, Երևան, 1974, 167 էջ:
2. Աճառյան Հր., *Հայոց լեզվի պատմություն*, մաս 1, Երևան, 1940, 355 էջ:
3. Աճառյան Հր., *Հայերեն արմատական բառարան*, հ. Ա, Բ, Գ, Դ, Երևան, 1926:
4. Բառնապյան Զ., *Ժամանականիշ բառերը հայերենի բարբառներում*, Երևան, 2009, 124 էջ:
5. Հովհաննիսյան Լ., *Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն*, մաս I, Երևան, 2008, 130 էջ:
6. Ղափանցյան Գ., *Հայոց լեզվի պատմություն. հին շրջան*, Երևան, 1961, 365 էջ:
7. Պետրոսյան Վ., *Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր*, Երևան, 2015, 348 էջ:
8. Ջահուկյան Գ., *Հայերեն ստուգաբանական բառարան*, Երևան, 2010, 820 էջ:
9. Ջահուկյան Գ., *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները*, Երևան, 1970, 215 էջ:

REFERENCES

1. Aghayan E., Bar'aqnnakan ev stugabanakan hetazot'utyunner, [Lexical and etymological researches, Erevan], 1974, (In Armenian)
2. Atwar'yan Hr., Hayoc lezvi patmut'yun, mas 1, [The history of the Armenian language, part 1, Erevan], 1940, (In Armenian)
3. Atwar'yan Hr., Hayeren armatakan bar'aran, h. A, B, G, D, [Armenian etymological dictionary, v. A, B, C, D, Erevan], 1926, (In Armenian)

4. Bar'nasyan J., Jhamanakanish bar'ery' hayereni barbar'nerum, [Time words in Armenian dialects, Erevan], 2009, (In Armenian)
5. Ghap'ancyan G., Hayoc lezvi patmut'yun. hin shrjan, [The history of the Armenian language: old period, Erevan], 1961, (In Armenian)
6. Hovhannisyan L., Grabari bar'apashari imastayin xmbəri qnnut'yun, mas 1, [Examination of the semantic groups of Old Armenian vocabulary, part 1, Erevan], 2008, (In Armenian)
7. Jahukyan G., Hayeren stugabanakan bar'aran, [Armenian etymological dictionary Erevan], 2010, (In Armenian)
8. Jahukyan G., Hayereny' ev hndevropakan hin lezunery, [Armenian and Indo-European languages, Erevan], 1970, (In Armenian)
9. Pertrosyan V., Y'ndhanur ev hay lezvabanut'jan harcer, [General and Armenoan linguistic issues, Erevan], 2015, (In Armenian)

РЕЗЮМЕ

Слова, выражающие моменты дня на карабахском диалекте

Алтунян Эдита

Арцахский государственный университет

Кафедра армянского языка им. ак. С. Абрамяна, аспирант

Степанакерт, Республика Арцах

Цель данной статьи – рассмотреть понятия утро, полдень, вечер, их соответствия и синонимические группы в карабахском диалекте, координируя всю семантическую структуру этих понятий, раскрывая их языковые и культурные ценности, с помощью которых выражаются духовные и биокультурные особенности диалектоязычных народов.

В рамках исследования мы поставили перед собой задачу: выявить функциональные особенности этимологических анализов и семантических сдвигов ранее указанных единиц, что в свою очередь позволяет выяснить путь развития данных понятий, таким образом подтверждает использование армянского языка на территории Арцаха и языковое влияние на диалектические реалии.

Мы провели исследование с использованием аналитико-сравнительных методов с исторической и современной точки зрения: даются генеологические справки единиц, затем на соответствующих наглядных примерах раскрываются частота использования и жизнеспособность данной единицы.

В результате, мы пришли к тому, что изучение рассматриваемых единиц позволяет выявить уникальность арцахского народа, национальную особенность, уникальный подход к восприятию мира. Изучение лексической основы карабахского диалекта выявляет уникальное место диалектной лексики среди армянской лексики.

Ключевые слова: Карабахский диалект, моменты дня, утро, полдень, закат, разнообразие синонимов, хронологический порядок.

SUMMARY

Day Time Words in Karabakh Dialect

Altunyan Edita

Artsakh State University,

Chair of Armenian language after Ac. S.Abrahamyan, Ph.D. Student

Stepanakert, Republic of Artsakh

The aim of the article is to examine the concepts of «morning», «noon», «evening», their dialectal correspondences and synonymous groups in the Karabakh dialect by coordinating the whole semantic framework of these units, discovering their linguistic and cultural value, semantic analysis, by which the intellectual and biocultural features of the dialect-speaking people are expressed.

In the framework of the research, we have put forward the task of revealing the functional features of the mentioned units by studying their etymological analyzes and semantic displacements, which gives an opportunity to find out the process of the development of the biography of those units, thus making the ancient use of the Armenian language and the linguistic influences of dialect in the territory of Artsakh factual.

The study has been conducted by using analytical-comparative methods with historical-contemporary points of view, the genealogical references of the units are given and then the operating frequency and viability of the unit are identified by giving relevant illustrative examples.

As a result, we have come to the conclusion that the study of the examined units allows revealing the unique identity of the Artsakh people, the national feature, self-specific approach to the world perceptions. The examination on the lexical basis of the Karabakh dialect reveals the unique place of the vocabulary of the dialect in the context of the Armenian vocabulary.

Key words: Karabakh dialect, times of the day, morning, noon, evening, variety of synonyms, chronological order